Արձանագրություն N 2

<<ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/15>> ծածկագրով Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 28.11.2019թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Ղուկասյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Բաղինյան
Լ. Խալաթովա
Շ. Իսախանյան
Կ. Բարսեղյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան

1. <<ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/15>> ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Տ. Ղուկասյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Գնման գործընթացն իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

բ) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 26.11.2019թ. ժամը 11:00-ին:

գ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հասցե	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
1	<<Ֆլեշ Մոտորս >> ՍՊԸ	Ռուբինյանց փ. 31	30,807,400.00 երեսուն միլիոն ութ հարյուր յոթ հազար չորս հարյուր	6,161,480.00 վեց միլիոն մեկ հարյուր վաթսունմեկ հազար չորս հարյուր ութսուն	36,968,880.00 երեսունվեց միլիոն ինը հարյուր վաթսունութ հազար ութ հարյուր ութսուն
2	<<ՋԻԷՆՋԻՔԵՅ ԳՐՈՒՊ>> ՓԲԸ	ՀՀ ք. Երևան, Արշակունյաց 119/12	34,230,444 երեսունչորս միլիոն երկու հարյուր երեսուն հազար չորս հարյուր քառասունչորս	6,846,089 վեց միլիոն ութ հարյուր քառասունվեց հազար ութսունինը	41,076,533 Քառասունմեկ միլիոն յոթանասունվեց հազար հինգ հարյուր երեսուներեք
3	<<ԷԼԻՏ ԷՍՎԵ>> ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Ս. Դավիթի 13/27	40.000.000 քառասուն միլիոն	800.0000 ութ հարյուր հազար	48.000.000 քառասունութ միլիոն

դ) Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ

1) <<ԷԼԻՏ ԷՍՎԵ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի հավելվածում առկա է անճշտություն (3-րդ և 4-րդ սյունակների արժեքների հանրագումարը չի համընկնում 5-րդ սյունակի արժեքին):

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է <<ԷԼԻՏ ԷՍՎԵ>> ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

2) <<Ֆլեշ Մոտորս>> ՍՊԸ-ի և <<ՋԻԷՆՋԻՔԵՅ ԳՐՈՒՊ>> ՓԲԸ-ի կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

1.2 Հաշվի առնելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել 26.11.2019թ. նիստը, ծանուցել հրավերի պահանջներին բավարարող գնահատված բոլոր մասնակիցներին (<<Ֆլեշ Մոտորս>> ՍՊԸ-ին և <<ՋԻԷՆՋԻՔԵՅ ԳՐՈՒՊ>> ՓԲԸ-ին) առաջարկված գների նվազեցման նպատակով 28.11.2019թ. ժամը 11:30-ին ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ, 460 սենյակ հասցեում կազմակերպվող բանակցությունների մասին:

Բանակցությունների համար սահմանված ժամին ներկա է գտնվել միայն <<Ֆլեշ Մոտորս>> ՍՊԸ-ի ներկայացուցիչը, որն իր գնային առաջարկը թողել է անփոփոխ, իսկ <<ՋԻԷՆՋԻՔԵՅ ԳՐՈՒՊ>> ՓԲԸ-ի ներկայացուցիչը ուշացումով ներկայանալու պատճառով բանակցություններին չի մասնակցել:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. <<ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/15>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղն զբաղեցրած մասնակիցների մասին

(Տ. Ղուկասյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից հայտերը գնահատվել են հետևյալ հերթականությամբ և հետևյալ կերպ

Մրցույթում զբաղեցրած տեղը	*Մասնակցի անվանումը*	*Հայտի գնահատականը*
1	<<Ֆլեշ Մոտորս >> ՍՊԸ	բավարար
2	<<ՋԻԷՆՋԻՔԵՅ ԳՐՈՒՊ>> ՓԲԸ	բավարար
-	<<ԷԼԻՏ ԷՍՎԵ>> ՍՊԸ	անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Տ. Ղուկասյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշում է ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-19/15 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ. Ղուկասյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման պատասխանը ստանալուց հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թվականի դեկտեմբերի 5-ին ժամը 10:30-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Տ. Ղուկասյան

Անդամ՝ ---------- Հ. Բաղինյան

---------- Լ. Խալաթովա

---------- Շ. Իսախանյան

---------- Կ. Բարսեղյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան